



ԿՐՕՆԱԿԱՆ, ԵԿԵՂԵՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ  
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԿԱՄԱԹԵՐԹ  
ԳԱՆԱՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆԻՒՍ-ՕԳՈՍՏՈՍ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 6, 2004 (24)

**LUYS** — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : [prelacy@armenianprelacy.ca](mailto:prelacy@armenianprelacy.ca)

[www.armenianprelacy.ca](http://www.armenianprelacy.ca)



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԵԼԱՆՄԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ

Բաբգէն Թօփճեան

ԱՆՄՈՌԱՆԱԼԻԴ

Խաժակ Արքեպիսկոպոս

ԿԱՆԹԵՂ ՄԸ ԾԻՋԵՑԱԻ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Գրիգոր Ծ.վրդ. Չիֆթճեան

ՋԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆԻ  
ԱՆՄՈՌԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վարդան Արք. Տէմիրճեան

ԽՈՍՏՄՆԱԼԻՑ ԱՇԱԿԵՐՏԸ,  
ՍՐԲԱԿՐՕՆ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԸ

Գրիգոր Փիտէճեան

ԴԱԴՐԱ՞Մ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ  
ՍՈՒՐԲԵՐ ՈՒՆԵՆԱԼԷ

Դոկտ. Արեւ քինյ. Մանուկեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՆՎԱՅԵԼ  
«ԳՐԱԽՕՍԱԿԱՆ»Ի ՄԸ ՄԱՍԻՆ

Վեր. Վահան Յ. Թուրքիկեան

# ԱՌԱՔԵԼԱՆՄԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ

30 Ապրիլ 2004ի երեկոյեան, Անթիլիասի մայրավանքին մէջ յախտեանական իր հանգիստը գտաւ Գերշ. Տ. Զարեհ Եպս. Ազնաւորեան, սուգի մատենելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Արամ Ա. Հայրապետը, միաբանութիւնն ու հաւատացեալ ժողովուրդը:

Հոգեւոյս սրբազանը՝ աշխարհական անունով Մինաս, ծնած է Պէյրուք 1947ին: Յանախած է տեղւոյն Ս. Յակոբ եկեղեցւոյ ազգային վարժարանը: 1960ին ընդունուած է Դպրեվանք, որուն ուսման շրջանը աւարտելէ ետք, արեղայ ձեռնադրուած է 1966ին, դասընկերոջ Ոսկան Մխիթարեանի հետ: 1970ին վարդապետական աստիճան ստացած է պաշտպանելով «Ս. Ներսէս Լամբրոնացի» կեանքը եւ եկեղեցական բարեկարգութիւնը» աւարտանաոր: 1980ին եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում ստացած է ձեռամբ Գարեգին Բ. Կաթողիկոսին:

Վարդապետութեան շրջանին ուսանած է Հոռմի մէջ եւ տիրացած *լիսանսիէ* Աստուածաբանութեան տիտղոսին: Վարած է Դպրեվանքի փոխ տեսչութիւնը, «Գլաճոր»-ի եւ «Հասկ»-ի խմբագիրի պաշտօնները եւ խմբավարած «Շնորհալի» երգչախումբը: Դասաւանդած է Մարտիկեան վարժարանին, Դպրեվանքին եւ Համագրգայինի հայագիտական բարձրագոյն հիմնարկին մէջ:

Եղած է կաթողիկոսական փոխանորդ Կիպրոսի հայոց թեմին, տեսուչ «Թռչնոց Բոյն»-ի, անդամ ու ապա ատենապետ կեդրոնական վարչութեան կրօնական ժողովին ու վարիչ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին:

Հրատարակած է շարքը «Լոյս եւ Աշխարհ» հատորներուն: Յօրինած է երաժշտական կտորներ: Հեղինակած է բազմապիսի ուսումնասիրութիւններ: Արդի աշխարհաբարի թարգմանած է Նոր Կտակարանը, իր վախճանումով թերաւարտ կը մնայ Հին Կտակարանի թարգմանութիւնը:

Հոգեւոյս Զարեհ Սրբազանին վերջին օծումը եւ թաղումը տեղի ունեցաւ 3 Մայիս 2004ին: Վերջին օծումը կատարեց Վեհափառ Հայրապետը: Զարեհեան դամբարանին մէջ հողի օրհնութեան եւ գերեզմանի կնիւմի արարողութեան նախագահեց Գերշ. Տ. Օշական Արք. Զոյլոյեան:

\*

\* \*

Ազնաւորեան Սրբազանը բազմաթիւ բարեմասնութիւններով օժտուած անձնաւորութիւն մըն էր: 1960ին երբ մուտք գործեց Պիֆֆայայի Դպրեվանքը, ննջարանի հսկիչի պաշտօնի թերմամբ նկատած էի անոր բարեհամբոյր բնաւորութիւնն ու բարեկրթութիւնը: Ուսանողութեան տարիներուն իր վրայ հրաւիրեց դասախօս ուսուցիչներու ուշադրութիւնը, որոնք իր մէջ նկատեցին ապագայ խոստացող եկեղեցւոյ իշխան մը: Արդարեւ, անցնող 38 տարիներու իր ծառայութիւնը Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռին ու Հայց. Առաքելական Ս.

Եկեղեցւոյ որպէս անբասիր հոգեւորական, բանիբուն վարդապետ աստուածաբանութեան, եկեղեցական պատմութեան եւ Ս. Գրոց, ներհուն դասախօս, քարոզիչ, ծիսագէտ ու շարականագէտ, խորահմուտ թարգմանիչ ու բանասէր արդարացուցիւն անոնց ակնկալութիւնը:

Վերջին ամիսներուն, Նիւ Եորքի մէջ Զարեհ Սրբազանի բուժումի շրջանին, առիթով մը երբ Օշական Սրբազանին հարց կուտայի անոր առողջութեան մասին ան մտահոգութեամբ ըսաւ «Բժիշկները լաւատես չեն ու եթէ զայն կորսնցնենք՝ հայ եկեղեցին պիտի աղքատանայ» եւ իրապէս աղքատացաւ հայ եկեղեցին անոր անժամանակ վախճանումովը, հակառակ տարուած բուժումի նիգերուն տնօրինութեամբ Վեհափառին ու անճնազոհ միաբաններու:

Զարեհ Եպս. Ազնաւորեան որպէս առաջելանման եկեղեցական ու սրբակրօն վանական իր ներդրումը պիտի ունենայ արդի շրջանի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէջ:

**ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ**

*«Աստուծոյ պատկերով ծնած մարդը կեանքը ապրելու համար պէտք է զայն ապրի Աստուծոյ կամքին եւ պատուիրաններուն համաձայն գործելով: Անոր համար կատարելապէս պէտք է հաւատանք եւ ընդունիճք որ մեզի կեանք, շունչ շնորհողը եւ ապրելու պատենհութիւն տուողը Աստուած ինքն է: Ան է ամէն ինչի սկիզբը: Ան է կեանքի աղբիւրը: Անով միայն կանք մենք: Ան է որ իմաստ, խորք եւ նպատակ կու տայ մեր կեանքին: Այլ խօսքով այս բոլորը կը նշանակեն որ երկրաւոր ընթացիկ այս կեանքը կ'իմաստաւորուի եւ կ'արժեւորուի ոչ թէ մեր ապրած տարիներու թիւով, այլ անհկա իմաստ, արժէք եւ նպատակ կը ստանայ, երբ զայն կ'ապրինք Աստուծոյ հաւատալով եւ իր կամքին համաձայն գործելով»:*

**Զարեհ Եպս. Ազնաւորեան**

# ԱՆՄՈՌ-ԱՆԱԼԻԴ

## Զարեհ Արք. Ազնաւորեանի յիշատակին

Բեկուած սրտով ու այս գրիչը բեկանելու անզուսպ ցանկութեամբ նստած եմ ու չեմ ուզեր գրել բառերը, բառերը տարանջատուած մեր էութենէն ներածնականէն, ոգեկանէն:

Նստած եմ յիշատակիդ դիմաց եւ դուն ես յիշատակդ: Դէմքդ խաղաղ եւ իմաստուն քանդակուած է իմ եւ ընկերներուդ՝ երէց եւ կրտսեր եղբայրներուդ մտածումի եւ զգացումներու ոգեկան ապառաժին վրայ, ապրելու համար հոն:

Մեր տարեկիցն էիր ու շատերուն կրտսերը, բայց քու կեանքով, քու վարքով եւ քու գործով եղար բոլորին երէցը, բոլորին օրինակելին, բոլորին խորհրդատուն:

Տարօրինակ էր, երբ իրարու հետ էինք, յաճախ կը խօսէինք ու կը վիճէինք մեր ժողովուրդի, մեր եկեղեցւոյ, մեր միաբանութեան կեանքն ու հոգեւոր իրավիճակը յուզող հարցերով, երբեմն տաք ու բուռն համոզումներով, զգացականութեամբ, բայց երբ քեզմէ հեռու էինք մեր գործին ու մտածումներուն մէջ քաղցրահայեաց ներկայութիւն էիր, ու կը մտածէինք՝ եթէ այս քայլը առնենք եւ կամ այս որոշումը ի՞նչ պիտի ըսէ Ջարեհը, Ջարեհը եւ միշտ Ջարեհը:

Ուրիշ ոչ ոք մեր եղբայրութեան կեանքին հետ շաղախուած է այնքան, որքան դուն, եւ շաղախուած պիտի մնայ՝ որքան դուն:

Բայց մեր եղբայրութիւնը քու անձկելի կամքիդ, քու ովկիանոսային նուիրումիդ, քու ժամերն ու ժամանակը անդրանցնող անդուլ աշխատանքիդ, քու հաւատքիդ ու սիրոյդ անափ երկնքիդ դիմաց՝ լոկ նեղլիկ խուց մըն էր:

Հազարաւորներու հպեցաւ քու կեանքդ եւ այդ կեանքերը այլեւս նոյնը չեղան՝ չէին կրնար նոյնը մնալ:

Եւ դեռ տիտանային գործիդ ղօղանջները տակաւին իրենց ճշմարիտ արձագանգը չեն ստացած եւ անոր յառաջացուցած ալիքները նոր են սկսած սփռուել մեր ժողովուրդի եւ եկեղեցւոյ ծովու մակերեսին վրայ: Հազար, հազարաւոր նոր մարդիկ ու սերունդներ՝ գիտակցօրէն կամ անգիտակցաբար պիտի գան մկրտուել քու սրբազան գործիդ յաւերժագնաց աւազանին մէջ ու վերածնիլ՝ բառին Աւետարանական իմաստովը. այդ վերածնածներէն մին երկնային ներշնչումով մը քեզ կը կոչէր «Շնչող եւ շրջող Աւետարանը»:

Կը մտածեմ, որքան անողոք եղաւ կեանքդ՝ կորուստներով, ցաւով ու տառապանքով հիւսուած, բայց եւ որքան հզօր եւ անասան մնաց կամքդ ու հաւատքդ, եւ մինչեւ վերջին շունչդ իսկ, դուն եղար բոլորէս քաջ ու խաղաղ. եւ դուն է, որ մեզ մխիթարեցիր մեր անիմաստ թոթովմունքներուն եւ մեր նաւապետը կորսնցուցած անդեկ ցնորումներուն մէջ:

Այսօր, փոխ կ'առնեմ բարեկամի մը այլ առիթով կատարած պատահական նշմարը ու զայն կը դնեմ քու անունիդ դիմաց, որովհետեւ, կը հաւատամ, կը հաւատամ ամբողջ սրտով, թէ ուրիշ ոչ ոք մեր ժողովուրդի եւ մեր եկեղեցւոյ ժամանակակից կեանքին մէջ չէ եղած այդ պատկերին ճշմարիտ մարմնաւորումը՝

«մեր միջնադարեան ձեռագիրներու մանրանկարներէն դուրս ցայտած հնա-  
դարեան մեր սուրբերուն շրջուն եւ կենդանի նորօրեայ վերածնունդը»:

«Եւ բանն մարմին եղել եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա ... լի շնորհօք եւ նշմարտութեամբ»:

«Եւ Աստուծոյ իմաստութիւնը մարդացաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք  
տեսանք անոր փառքը... շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն»։ (Յովհ. Ա. 14)

Այսօր Աւետարանին այս բառերը քիչ մը աւելի յստակ են, ու թող որ  
համարուիմ թովմաս առաքեալի հետեւորդներէն մին՝ քիչ մը աւելի կը հաւատամ  
այդ խօսքերուն վաւերականութեան:

Աստուծոյ շնորհին մարմնաւորումը աւելի վաւերական արտայայտութիւն  
չէր կրնար գտնել քու անձէդ ու գործէդ դուրս՝ անմոռանալիդ իմ՝ եղբայրս սիրելի՝  
Զարեհ:

Արդարիդ յիշատակը ոչ միայն թող միշտ օրհնուի, այլ օրհնութիւնն է մեր  
կեանքներուն:

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆ

## ԿԱՆԹԵՂ ՄԸ ՇԻՉԵՑԱՒ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ

(Զարեհ Արք. Ազնաւորեանի վախճանման առիթով)

Հակառակ ձեռնադրութեամբ ու օծումով ստացուած կարգին, հայ եկեղեցւոյ  
եպիսկոպոսաց դասին մէջէն կը զատորոշուին այն եպիսկոպոսները, որոնց տրուած  
«Սրբազան» տիտղոսը իրաւացիօրէն կը հանդէի անոնց անուան դիմաց, շրթներէ  
աւելի սրտէ արտասանուած իբրեւ բնական մակդիր՝ անձին հետ նոյնացած կոչում:

— Սրբազա՛ն:

Տիտղոսին նոյնացումը անձին հետ, սրբութեան պսակը կազմեց իր գլխուն  
վերեւ, երբ ե՛ւ հոգեւորական դասին ե՛ւ ժողովուրդի զաւակներուն մօտ վաստ-  
կեցաւ ամբասիր նկարագրով ու գիտական լայն պաշարով հոգեւորականի  
համբաւը:

Իր անուան տիրոջ՝ Երջանկայիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսի նման  
պարթեւահասակ ու գինուորականի քայլուածքով, վեհ ձայնով ու հեղահամբոյր  
նայուածքով այս եկեղեցականը, ոչ միայն այդ անուան տէրը դարձաւ տղամար-  
դու արի կեցուածքով ու մինչեւ մահուան սնարը երկարող սկզբունքայնութեամբ,  
այլ նաեւ տիպար հոգեւորականի բոլոր արժանիքներով:

Հայ եկեղեցւոյ նոր օրերու հոգեւորականութեան շարքերուն մէջ ակներեւ  
իր հմտութիւնը զանազան բնագաւառներէ ներս, իր վաղաժամ կորուստով  
կ'աղքատացնէ ընդհանրապէս մեր ժողովուրդը ու մասնաւորաբար հայ եկեղեցին  
իր ընդհանրութեան մէջ:

Իր հոգեւորական ու մտաւորական կազմաւորումը նախ Անթիլիասի Դպրե-վանքին մէջ եւ ապա Եւրոպայի մէջ ստանալով, Զարեհ Սրբազան զայն լիովին ծառայեցողց մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին, անցնող 38 տարիներու հոգեւորա-կան իր ծառայութեան ընթացքին: Հայ եկեղեցւոյ մշակութային ծով ժառանգու-թեան խիզախ այս նաւապետը, բնատուր ու ինքնավար ճմտութեամբ նաւեց մեր հայրերու գրականութեան դարաւոր ալիքներուն վրայ ու մեր մշակութային պատմութեան ովկիանեան խորութիւններէն դուրս բերաւ մթութեան մէջ մնացած ուսուցումները մեր նախնիներուն, հաղորդակից դարձնելով բոլորս մեր արմատ-ներուն: Գրաբարեան խրթնաբան տողերը սահունն աշխարհաբարի շարահիւ-սութեամբ ընկալելի դարձնելու ձգտումը մնայուն իղձը եղաւ Սրբազանին:

Հայ հոգեւոր գրականութեան, մեկնաբանական երկերու, սուրբ գրային ծանօթութեան, հայ եկեղեցւոյ երաժշտական ժառանգութեան այս պահապանը, տառին կառչած բծախնդրութեամբ այսօրուան կեանքին պատշաճեցողց զանոնք, խղճմտութեամբ իրագործելով Անթիլիասի մէջ իր վարած Քրիստոնէական Դաստիարակութեան Վարիչի պատասխանատու պաշտօնը: Հայ եկեղեցական երաժշտութեան անխաթար պահպանումը ու սերունդէ սերունդ փոխանցուած երգեցողութեան անմահացումը ապահովեց իր երաժշտական կարողութեամբ: Տքնաջան աշխատանքով իրարու ետեւէ Անթիլիասի տպարանէն լոյս տեսան եւրոպական ճայնագրութեամբ տպուած շարականներու, մեղեդիներու ու հոգեւոր երգերու հատորներ, միաձեւ ու կանոնաւոր երգեցողութիւն ապահովելու համար մեր բոլոր եկեղեցիներէն ներս:

Յարատեւ աշխատանքի ու զօրեղ կամքի արդիւնք եղող ընդհանուր զարգացումով այս հոգեւորականը, շնչող հանրագիտարան մը եղաւ ու հարցում-ներու անտարակոյս բանալին, որուն տուած բոլոր բացատրութիւնները ու լուսա-բանութիւնները հիմնուած էին փաստացի տուեալներով: Պրպտող միտք մը, որուն աղբիւրագիտական ցանկը այնքան ճշգրիտ էր, այնքան ճոխ ու ամբողջական:

Սերունդներ դարբնելու կոչուած այս մեծ ուսուցիչին անունն ու համբաւը դեռ երկա՛ր պիտի ներշնչէ գալիքները, որոնք խոնարհելով անոր միա՛յն իմացա-կան թողօնին ու մտաւորակա՛ն կտակին դիմաց, պիտի մտնեն հայ հոգեւորակա-նութեան շարքերէն ներս:

Թարգմանչաց Սերունդի յետնորդ այս թարգմանիչը Աստուածաշունչով ապրուած կեանքով չբաւարարուեցաւ միայն: Գուցէ ա՛յդ միայն բաւէր աշխար-հական թէ հոգեւորական անձ մը երկինքի արքայութեան արժանացնելու: Սակայն Սրբազանը, Աստուածաշունչը ապրելէ բացի, զայն մեր ժողովուրդի այսօրուան կեանքին մէջ տեղադրելու նախանձախնդրութեամբ շուրջ 20 տարի-ներ առաջ ձեռնարկեց Սուրբ Գիրքի ամբողջական թարգմանութեան հսկայա-ծաւալ աշխատանքին: Այս ծիրէն ներս տարբեր լեզուներու իր ճմտութիւնը պատճառ դարձաւ որ ան եբրայերէն, յունարէն ու գրաբար բնագիրներու համե-մատութեամբ արդի աշխարհաբարի թարգմանէ Սուրբ Գիրքը:

Տարիներու իր տքնաջան աշխատանքին իբրեւ արդիւնք, երկու հրատարա-կութիւններով Անթիլիասի տպարանէն լոյս տեսաւ Նոր Կտակարանը աւետա-

բաններու յատուկ ներածականներով ու Ս. Գրային համառօտ բառարանով: Իր կենդանութեան երջանկութիւնը ունեցաւ նաեւ հրատարակելու Սաղմոսաց Գիրքը, իսկ Հին Կտակարանի միւս գիրքերը, որոնցմէ շատերը՝ ինչպէս Հնգամատեանը, աւարտած էր արդէն, իր վախճանումով կը մնան թերաւարտ:

Կանթեղ մը շիջեցաւ Անթիլիասի Մայրավանքին մէջ: Կանթեղը պլպլաց պահ մը, ու ապա՝ շիջեցաւ ... : Կաթիլ առ կաթիլ հաւաքած իւրը առատօրէն բաշխեց, սակայն լոյսի բաշխումին հետ ի՛նք շիջեցաւ: Եւ ո՛ր վ հրաշք ... այսօր շիջած այս կանթեղը, դարե՛ր ամբողջ լուսաւորելու իւր լեցուց մեր մշակութային լապտերին մէջ, հայ եկեղեցւոյ ու ժողովուրդի դարաւոր պատմութեան խորանը լուսաւորելու համար...:

Այո՛, կանթեղ մը շիջեցաւ Անթիլիասի մէջ, սակայն նոր կանթեղներ պիտի վառին հոն, ի ինդիր հայ եկեղեցւոյ, Հայաստանի ու հայ ժողովուրդի լուսաւորութեան:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ

## ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆԻ ԱՆՄՈՌԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Իր ծննդավայրին Պէյրութի Էշրէֆիէ թաղին մէջ, գինք ճանչցած օրէս, բարեկամական ջերմ կապ մը ստեղծուած էր մեր միջեւ: Նոյն վարժարանին աշակերտած եւ նոյն եկեղեցւոյ մէջ տարբեր տարիներուն դպրութիւն կատարած ըլլալով, Դպրեվանքի մէջ շարունակեցինք մեր ուսումը եւ Միաբանական Ուխտին մաս կազմեցինք, առիթ ստեղծելով որ մեր միջեւ մշակուին ջերմ եւ անկեղծ յարաբերութիւններ:

Բարի, խոնարհ, համեստ, աստուածավախ եւ եկեղեցանուէր ծառայութիւններով օժտուած հոգեւորական մը հանդիսացաւ, պատիւ եւ յարգանք վայելելով ամենուրէք, իր կոչումին, համալսարանական բարձրագոյն ուսման տիրանալուն թէ վանական ամենէն համեստ պաշտօններէն բարձրագոյնին կոչուած իրաւ հոգեւորականն էր ան: Լուռ եւ երկարժամեայ աշխատանքով ինքզինք հայ եկեղեցական եւ հայազիտական ուսմանց մէջ հարստացուցած էր: Իր խօսքին, քարոզներուն, ուսումնասիրութեանց, Աստուածաշունչի թարգմանութեան եւ կրօնաբարոյական նիւթերով յագեցած դասախօսութիւններու ընդմէջէն ցոյց տալով պատրաստուած հոգեւորականի եւ մշակոյթի գործիչին տիպար պատկերը, որ իր կեանքին բոլոր օրերը անմնացորդ օգտագործեց իր գիտութիւնը ծանուցանելու եւ բաշխելու Անթիլիասի եւ Կիլիկիոյ Ս. Աթոռի բոլոր թեմերէն ներս:

Ան մեծ ներդրում կատարած է իր պաշտօնին բերումով Հայ եկեղեցւոյ

Հոգեւոր ժառանգութեանց հրատարակութեան աշխատանքին մէջ: Ունի հոգեւոր, թարգմանական, երաժշտական եւ ուսումնասիրական բազմաթիւ հրատարակութիւններ: Իր աշխատանքներուն գլուխ գործոցը կազմեց Աստուածաշունչի արդի աշխարհաբարի թարգմանութիւնը, որ 20 տարիներու աշխատանքին արդիւնք է, որուն Նոր Կտակարանի թարգմանութիւնը արժանացաւ Բ. տպագրութեան: Մազթելի է որ ի մօտոյ Հին Կտակարանի արդի աշխարհաբար լեզուի թարգմանութեան գործն ալ լոյս կ'ընծայուի: Դպրեվանքի մէջ ան դասաւանդեց Մեկնութիւն Ս. Գրոց, Ներածութիւն Հին Կտակարանի, եւ Մեկնութիւն Աւետարանի: Հոգելոյս Սրբազանը Դպրեվանքի աշակերտներուն դպրութեան, սարկաւազութեան եւ քահանայական ձեռնադրութեանց բազմաթիւ առիթներ ունեցաւ, որոնք սիրով կատարեց:

Կազմեց եւ հրատարակեց Կաթողիկոսարանի Գրպանի (փոքր) Օրացոյցներն (1972-1981) ու Յուշատետրերը (1972-2002):

Իր գրական վաստակին մաս կը կազմեն բազմաթիւ բանասիրական ուսումնասիրութիւններ եւ աշխարհաբար թարգմանուած ծիսական գիրքեր, Հայ Եկեղեցւոյ շարականներու ձայնագրեալ հատորներ, Մաշտոց-Ծիսարան, թիւով աւելի քան 30 հատ:

Հոգւ. Սրբազանը Հայ Եկեղեցւոյ ընդհանրապէս եւ Կիլիկիոյ Ս. Աթոռոյն մասնաւորաբար ծառայեց անշահախնդիր մօտեցումով, մերժեց փառքն ու ունուցիկ գովաբանութիւնները, խօսքէն աւելի գործին տալով իր նախասիրութիւնը: Որպէս փայլուն աստղ մը ծագեցաւ հայ կեանքի երկնակամարին վրայ, անմոռաց պահելով իր անունն ու բեղմնաւոր վաստակը բոլորիս սրտին ու հոգւոյն մէջ:

Անթիլիաս

ՎԱՐԴԱՆ ԱՐՔ. ՏԷՄԻՐՃԵԱՆ  
(Յապաւուած)

«Սրբութիւնը անպայմանօրէն բացառիկ վիճակ մը չէ մարդուն մէջ, այլ միայն հոգեւոր կեանքի ձեւ մը, որ կը ձգտի Քրիստոսի անձին ու կեաքին նմանութիւնը բերել իր անձին վրայ»:

Զարեհ Եպս. Ազնաւորեան

# ԽՈՍՏԱՆԱԼԻՑ ԱՇԱԿԵՐՏԸ, ՍՐԲԱԿՐՕՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ

Ուրբաթ, Ապրիլ 30ին, երբ հարցով մը նիւ Եորքի Ազգային Առաջնորդարանի հիւրընկալ Տիկ. Ռիթա Կիրակոսեանին հեռաձայնեցի, խօսակցութեան վերջաւորութեան, ինչպէս յաճախ, ուզեցի գիտնալ Զարեհ Արք. Ազնաւորեանի առողջական վիճակին մասին: Պահ մը լռութենէ ետք յուզուած ձայնով գուժեց Սրբազանին մահուան բօթը. անհունօրէն ցնցուած վերջ տուի խօսակցութեան:

Հոգիս փլած, գլուխս գոյգ ձեռքերուս մէջ առած խորհրդածութիւններու պահ մը ունենալէ յետոյ անհաւատալի բայց ցաւալի եւ դժբախտ իրականութեան առջեւ աղօթեցի Սրբազանին հոգւոյն համար:

Ծիշդ է, որ «մահը մերն է, մենք մահինը» ու ամէն անհատ Աստուծոյ արարածն է, ատով հանդերձ մարդ կայ եւ մա՛րդ կայ: Դժբախտաբար մեծ է թիւը անոնց, որոնք աշխարհ կու գան, կը վայելեն Աստուծոյ ընծայած բարիքներն ու շնորհները սակայն առանց ոչ մէկ օգտակար, շնորհակալ գործ ընելու կը մահանան: Իսկ կան այնպիսիներ, որոնք փոքրամասնութիւն են, հաւատալով Աստուծոյ շնորհած կեանքի նպատակին՝ առաքելութեան կը վերածեն զայն: Այս երեւոյթին պատճառաւ է որ մահը անփոխարինելի դարձնելով անհատը ապրող շուրջըններուն, ազգին ու եկեղեցիին համար մեծ կորուստ կը դառնայ եւ խորունկ ցաւի պատճառ:

Ս. Գրային բացատրութեամբ առաջին խումբին պատկանող մարդը կը նմանի Սաղմոսերգուին հետեւեալ նկարագրականին.- «Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկէ: Ծնչէ ի նմա հողմ՝ եւ ոչ է, եւ ոչ եւս երեւի տեղի նորա» (Գիրք Սաղմոսաց, ԾԲ (ԾԳ), 15-16): Իսկ յաջորդ համարներով Սաղմոսերգուն, կարծէք կը նկարագրէ երկրորդ խումբին պատկանող մարդը, ըսելով.- «Բայց ողորմութիւն Տեառն յաւիտեանս յաւիտեանից ի վերայ երկիւղածաց իւրոց, եւ արդարութիւն նորա յորդոց մինչեւ յորդիս: Ոյք պահեն գուխտ նորա, յիշեն զպատուիրանս նորա եւ առնեն զնա» (նոյն, 17-18):

Հանգուցեալ Զարեհ Սրբազան, որպէս մարդ, այս երկրորդ խումբին պատկանող հազուագիւտներէն էր:

Զարեհ Արքեպիսկոպոս Հայց. Եկեղեցւոյ եպիսկոպոսաց դասուն մէջ պատկառելի ու հեղինակաւոր անձնաւորութիւն մըն էր, իսկ Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան միաբանութեան տիպար հոգեւորականը:

Զէր կարելի ծանօթանալէ յետոյ իրեն, չակնածիլ անոր:

Իմ ծանօթութիւնս Սրբազանին հետ կ'երթայ տարիներ ետ, երբ տակաւին Անթիլիասի Դպրեվանքին Եւրոպական ձայնագրութեան եւ եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ էի:

1960ի դպրոցական տարեշրջանը սկսաւ հոկտեմբեր 11ին:

Ձայնագրութեան դասաւանդութեան համար, երբ այդ տարին առաջին

անգամ ըլլալով Բ. դասարանը մտայ տեսնելով նախորդ տարուան աշակերտութեան վերադարձը ուրախութիւնս յայտնեցի եւ շնորհաւորեցի զիրենք որպէս այլեւս Բ. կարգի ուսանողներ: Իսկ, դասարանի մէջտեղի կարգին վերջին գրասեղանը գրաւած էր քիչ մը ամօթիսած, պայծառ դէմքով եւ բարձր հասակով նոր ուսանող մը՝ Մինաս Ազնաւորեան անունով, 13 տարեկան: Բարիգալուստ մաղթեցի իրեն եւ շնորհաւորեցի զինք Դպրեվանեցի դառնալուն համար:

Նախակրթարանի մէջ յառաջագէ՛մ աշակերտ մը եղած ըլլալուն պատճառաւ տեսչութիւնը զինք Բ. կարգ դրած էր:

Հակառակ որ դասընկերները իրմէ տարի մը աւելի առաջ էին Դպրեվանքի կրթական ծրագրին մէջ, ան շուտով կարողացաւ ընտելանալ ծրագրին մէջ յաջողելուն կերպերուն եւ դարձաւ 14 հոգինոց դասարանի լաւագոյններէն ու աւելի ուշ՝ լաւագոյնը:

Իր ուշիմութեամբն ու պարտաճանաչութեամբը բոլոր ուսուցիչներուն ուշադրութեան եւ գնահատանքին արժանացաւ: Իսկ, երաժշտութեան իմ դասերուս մէջ, հակառակ որ իր դասընկերները արդէն իսկ Եւրոպական ձայնագրութիւնը սկսե՛ր էին կարգալ, ինչպէս նաեւ եկեղեցական երաժշտութեան մէջ յառաջացած եւ ընթացքին ծանօթացած էին, յամառ աշխատանքով շուտով սկսաւ մրցիլ դասարանի լաւագոյններուն հետ եւ մինչեւ տարուան վերջաւորութիւնը ամբողջ Դպրեվանքին մէջ ճանչցուեցաւ որպէս փայլուն եւ խոստմնալից աշակերտ:

Պատանի Մինաս Ազնաւորեան օժտուած էր նաեւ երաժշտական շնորհներով: Կը զգայի իրեն ունեցած սէրը երաժշտութեան հանդէպ ու այդ իսկ պատճառաւ չափազանց յարգալից վերաբերմունքը անձին նկատմամբ: Ինչ որ կը բացատրէի, կը սորվեցնէի կարծէք սպունգի նման ամբողջութեամբ կը ծծէր: Ունէր երաժշտական լաւ եւ սուր սկանջ, ինչպէս նաեւ գեղեցիկ ու ախորժալուր որակով ձայն:

Խոստմնալից աշակերտը Դպրեվանքեան դարբնոցին մէջ կոփուելով ոչ միայն հետզհետէ կը դառնար օրինակելի աշակերտ, սարկաւագ, այլ՝ ձեռնագրուելով կուսակրօն եկեղեցական արեղայ, վարդապետ ու ապա եպիսկոպոս ամբողջովին հայ եկեղեցւոյ եւ ժողովուրդին նուիրեալ հոգեւորական մը, համեստ ու խոնարհ մշակ մը:

Միտքն ու հոգին առաւել զարգացնելով եւ ուռճացնելով օտար բարձրագոյն ուսումնարաններուն մէջ, ինչպէս Հռոմի մէջ, այլ եկեղեցական գիտութեանց շարքին խորացաւ նաեւ երաժշտութեան ստեղծագործական բաժնին մէջ:

Ես, որպէս երաժշտագէտ ու իր երաժշտական աշխարհ մուտքին առաջին դողդոջուն քայլերը առաջնորդող ուսուցիչ մեծ հետաքրքրութեամբ եւ հպարտութեամբ, անհուն ուրախութեամբ եւ բաւարարութեամբ կը հետեւէի իր այլ բազմաթիւ բնագաւառներէ ներս տարած հսկայական աշխատանքներուն ու ստանձնած պատասխանատու պարտականութիւններուն շարքին իր երաժշտական աշխատանքներուն:

Անմիջապէս ըսեմ, որ ինչ որ կ'ընէր հոգեւոր պարումներու դրսեւորումներով, ըլլայ ան երաժշտական կամ ոչ, իր ազգին ու եկեղեցիին եւ մանաւանդ

Աստուծոյ փառքին համար կ'ընէր: Ասոր համար չափազանց մեծ էր եղած նշանականութիւնը երիտասարդներու կեանքին այնքան կարեւոր հոգեւոր երեսը զարգացնելու դաստիարակչական իր աշխատանքին:

Սրբազանը յօրինած էր հոգեւոր երգեր երիտասարդներուն համար: Ստեղծագործած էր հոգեւոր երգեր յատկապէս փոքրիկներու համար: Ունէր նուազախմբային ու երգչախմբային մշակումներ, որոնցմէ ոմանք արժանացած էին հրատարակութեան: Ու այս բոլորը պարբերաբար ալ կը կատարուէին:

Մեծ եղեռնին զոհ գացած հայ ժողովուրդին համար յօրինեց եկեղեցւոյ մէջ երգելի նահատակաց «Կանոն»ը, որ ժամերգութեանց ընթացքին երգուող շարականներու շարք մըն է: Հսկայ գործ. անշուշտ հետեւելով միջնադարեան շարականագրութեան ոճին եւ երաժշտական ավանդութեանց: Գործ մը, որ ինքնին կը վկայէ Սրբազանին ոչ միայն ազգին նկատմամբ ունեցած իր սիրոյն չափանիշը, այլ նաեւ անոր ունեցած եկեղեցական երաժշտութեան խորունկ հասկացողութիւնը:

Կաթողիկոսարանի «Շնորհալի» երկսեռ երգչախումբը, որ Երջանկայիշատակ Զարեհ Կաթողիկոսի օրով խորիմաստ-երաժիշտ խմբավար եւ հմուտ շարականագէտ Տիար Գէորգ Գանտահարեան հիմնած էր, որ սակայն, դժբախտաբար երկրի քաղաքական դժուար կացութեան պատճառաւ կազմալուծուած էր, մեծ ջանքերով երիտասարդներ հաւաքելով իր շուրջ կեանքի վերակոչեց «Շնորհալի»ն: Ոգեւորութեամբ սորվեցուց եւ պատրաստեց երգչախումբը երգելու քառածայն պատարագ եւ տալու հոգեւոր համերգեր:

Արդեօք համեստութեան ու յարգանքի արտայայտութիւն էջ՞ որ պատարագը սորվեցնելէ յետոյ երգչախումբին, զայն կատարելու պատիւը կու տայ երգչախումբի անդրանիկ ու հիմնադիր ղեկավար պըն. Գէորգ Գանտահարեանին:

Զարեհ Սրբազան կարողացաւ իր անձին մէջէն երիտասարդութիւնը կապել եկեղեցիին:

Անցեալ տարի, երբ ինքզինք լաւ կը զգար, զինք տունս բերի, անցեալի քաղցրաքաղցր օրերը վերյիշեցինք ու վերապրեցանք: Ունեցանք եկեղեցական երաժշտագիտական մտքերու ջերմ փոխանակումներ:

Դժբախտաբար, հայ եկեղեցականներուն մէջ միակն էր որ բացի ծիսակատարութենէ եւ շարականերգութենէ ունէր նաեւ եկեղեցական երաժշտագիտութեան խորունկ ծանօթութիւն:

(Այս փակագիծով, պատիւով կը յիշեմ որ Օշական Արք. Չոլոյեան եւս երաժշտութեան լաւ աշակերտներէս էր եղած: Ինք ալ Դպրեվանք մտած էր 1960ին: Երաժշտասէր, ձայնեղ, երաժշտական սուր ականջով ու արթնամիտ, 13 տարեկան պատանի մըն էր: Ու այսօր ճանչցուած է որպէս լաւ շարականագէտ եւ ծիսագէտ: Ճիշդ այս պատճառաւ էր, որ Զարեհ Սրբազանին որպէս ամենամօտիկ անձը եւ յատկապէս որպէս երաժշտութիւն եւ շարականերգութիւն գիտցող հոգեւորական միասնաբար ձեռնարկեցին Անթիլիասի ավանդական եղանակները պահպանելու մտահոգութեամբ Անթիլիասի Մայր Տաճարին մէջ երգուող երաժշտութիւնը եւրոպական ձայնագրութեամբ արձանագրելու վիթխարի աշխատանքին: Խանդավառութեամբ սկսուած գործը, որ մի քանի հատորներով ալ

հրատարակուեցաւ, մնաց անաւարտ: Այս գործին ամբողջացումը պէտք է Օշական Սրբազանին «ճիտին պարտք»ը ըլլայ):

Այցելութեան ընթացքին Ջարեհ Սրբազան ընտանիքիս յանձնեց Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հրատարակած հոգեւոր երգերու երկու խտասալիկներ, ուր երգերուն մեծամասնութիւնը Սրբազանին ստեղծագործութիւններն ու մշակումներն էին: Խտասալիկներուն անուններն են. «Երգեցէք միշտ մանուկներ» եւ «Նոր Տարուան եւ Ս. Մննդեան երգեր»: Երաժշտութիւն մը, որուն պակասը այնքան զգալի է այսօրուան չափազանցօրէն աշխարհականացած երաժշտութեամբ յազեցած միջնորդութիւն մէջ հասակ առնող մեր երիտասարդներուն մօտ:

Ջարեհ Սրբազան, իր համոզումներուն մէջ եղած էր միշտ անխախտ ու հաստատ եւ ցուցաբերած հերոսական կամք, որոնք արդարեւ, ապացոյց էին անկեղծութեան ու ինքնավստահութեան:

Ջարեհ Սրբազան, իր կեանքին օրինակովը նիւթական արժէքներէ եւ փառամոլական սնափառութիւններէ հեռու եւ վեր մնալով հոգեկան առաքինութիւններու գնահատող մը եղած էր:

Ան, նախընտրեց ապրիլ ու ստեղծագործել խնկաբոյր վանքի իր խաղաղ ու համեստ խուցին մէջ եւ մնալ անարծաթ եկեղեցական:

Հոգեւորականի առաքելական իր կոչումին խորապէս հաւատարիմ, ազնուութեան եւ համեստութեան մարմնավորումով, անարատ բարոյականով եւ մաքրամաքուր կենցաղով խոնարհ սրբակրօնը՝ Ջարեհ Սրբազան, բառին ամենաուժեղ իմաստով անբասիր եկեղեցական մըն էր: Այնքան որ երիտասարդներ, յատկապէս Դպրեվանեցիներ, իրեն նայելով որպէս տիպարի, կը սորվէին թէ՛ իրաւ եկեղեցականը ինչպէս պէտք է ըլլայ:

Ջարեհ Սրբազան, ինչպէս վերը տեսանք, փոքր տարիքէն բացուեցաւ երաժշտութեան հմայիչ աշխարհին, սիրեց զայն, յատկապէս սիրեց եկեղեցւոյ աղօթք-երաժշտութիւնը: Շուտով սորվեցաւ եւ սիրելով երգեց զայն: Տարիներու հետ իր հաւատքի խորացումով եւ հոգեկան ապրումներու ուժեղացումով եկեղեցւոյ մէջ երգելու սէրը վերածուեցաւ երանութեան:

Ջարեհ Սրբազանին համար եկեղեցւոյ մէջ երգելը երանութիւն էր:

Ափսոս որ անողոք հիւանդութեան պատճառաւ հէգ Սրբազանը տարածածօրէն լուսավառ մօմի մը նման հալեցաւ, տժգունեցաւ եւ շիջեցաւ:

Առաքելատիպ Ջարեհ Սրբազանին դառնակակիծ վախճանման առիթով կ'աղօթեմ որ Աստուած երանելիներու շարքին դասէ ու երկնային լոյսերուն արժանացնէ անոր սուրբ հոգին:

Վշտաբէկ սրտի խոր զգացումով կը խոնարհիմ լուսահոգի Սրբազանին անշէջ յիշատակին առջեւ:

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ

Նիւ Եորք

Երաժշտագետ

# ԴԱԴՐԱՐԾ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՈՒՐԲԵՐ ՈՒՆԵՆԱԼԷ

## 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան բիւրատը նահատակներու եւ Կոմիտաս Վարդապետի սրբադասումին ի խնդիր

«Իմաստութիւնը հայեցողական դրութիւններ կ'նշէ ու կու տայ, գիտութիւնը՝ օրէնքներ, գրականութիւնը՝ երկեր, արուեստը գեղեցկութեան գործեր, Եկեղեցին սակայն՝ ՍՈՒՐԲԵՐ...»:

Շահան Ռ. Պէրպէրեան

1915 Ապրիլ 24: Դարձեալ կանգնած ենք մեր ժողովուրդի պատմութեան ամենամռայլ թուականին առջեւ: Այսօր, հայ ժողովուրդը համայն, Մայր Հայաստանի ու Արցախի մէջ, անտարակոյս նաեւ Սփիւռքի ամբողջ տարածքին, հոգեւին կը քայլէ լուռ եւ ինքնամփոփ դէպի Ծիծեռնակաբերդ, Տէր-Ջօր, Նահատակաց Մատուռն Անթիլիասի, դէպի բիւրատը յուշարձանները հայ դաղթօծախններու, իր կուրծքին տակ ամփոփած անհունը ցաւին ու բոլոր ծովերը խորունկ վիշտերուն՝ աւելի քան մէկ ու կէս միլիոն իր նահատակներուն:

Այսօր, այդ սեւ թուականէն 89 տարիներ ետք, վերստին կ'ապրինք աղիտալի անկումը մեր պատմութեան, անցեալը որ անցած չէ, կը տեղափոխենք ներկային մէջ, մարմին կու տանք անոր ոչ մեր երեւակայութեան ճիգով, այլ ապրումով, մեր սրտին ու արեան ամենաջերմ կանչով, մեր կենսատենչ շունչով եւ ոգիով, ու կը տեսնենք անլուր նահատակութիւնը հայ ցեղին, մահու աքսորը մեր պապերուն, ամայացումը մեր հիւրընկալ, շէն զիւղերուն ու մարդաշատ քաղաքներուն, լլկումը մեր սրբութիւններուն, քրիստոնէական հաւատքին ներշնչած մեծագոյն արգասիքներուն՝ աղօթատուներուն եւ հոյակերտ տաճարներուն, գիր-գրականութեան եւ դպրութեան դարբնոց, հայ մշակոյթի մշտաբոլբոլ քուրայ մեր վանքերուն:

Յետադարձ ակնարկ մը նետելով մեր մօտիկ անցեալի 100 տարուան պատմութեան վրայ, զարհուրանքով կը տեսնենք, թէ 20րդ դարու սկիզբը հայութեան համար դարձած է Գողգոթայի արիւնոտ ճամբայ մը նահատակութեան, զոր իր ամենադաժան գալարումներուն մէջն անգամ չէ կնքուած մահուան վճիռով, այլ յարութեան եւ վերապրումի հրաշափառ փաստով: Ընդամէնը դար մը ետք, կ'արթնայ պատմութեան խիղճը, եւ մեծ ու փոքր պետութիւններ հետզհետէ կը ճանչնան հայկական ցեղասպանութեան անհերքելի փաստը՝ Ցեղասպանութեան մասին համապատասխան բանաձեւերու որդեգրումով:

Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ, 21 դարու արշալոյսն, ուրեմն, Հայութեան համար յատկանշական դարձաւ խոշոր նուաճումներով: 2001 թուականի Յունուարին, արեւմտեան մեծ պետութիւններուն մէջ առաջինը ըլլալով, Ֆրանսա պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը՝ ընդունելով

առ այդ համապատասխան օրէնք: Ֆրանսայի քաջ օրինակին հետեւեցան եւս ուրիշ երկիրներ, որոնք իրենց խորհրդարաններու միջոցաւ ճանչցան Հայոց Յեղասպանութեան պատմական իրողութիւնը:

Որքան ալ հպարտառիթ ըլլայ վերոյիշեալ երեւոյթը հայութեան համար, դասախօսութեանս առնչութեամբ տեղին չէ այստեղ մին միւսի հետեւէ զանոնք թուարկել կամ վերլուծել անոնց քաղաքական գարգացումները: Նիւթը պիտի ամփոփենք յիշելով Զուլիցերիոյ պարագան, երբ երկրիս 23 քանթօններէն մին՝ քանթօն Վոտ, ժընեւի քանթօնէն ետք, երկրորդը ըլլալով, Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003 թուականին պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը: Քաղաքական եւ իրաւական հանդամանքներէ բացի, այս կարեւոր իրադարձութիւնը ո՛չ միայն հայութեան, այլ ընդհանրապէս բարոյական մարդուն համար ունի խորհրդանշական մեծ նշանակութիւն, տրուած ըլլալով որ 1923 թուականին, Վոտ քանթօնի Լօզան մայրաքաղաքին մէջ, ընդմիջտ թաղուած եւ մոռացութեան մատնուած կը թուէր ըլլալ նահատակուած եւ խաբուած ժողովուրդի մը արդար դատը, որ կը կրէր «հայկական հարց» յորջորջումը:

Դարձեալ, վերոյիշեալ այս նշանակալից եղելութենէն ընդամէնը քանի մը ամիս առաջ, նոյն 2003 տարւոյն Ապրիլի 24ը, հայկական տարեգրութեանց մէջ անպայման յիշատակելի կը դառնայ մէկ այլ հպարտառիթ նուաճումով՝ Հայութիւնը կը յաջողի Փարիզի «սրտին» մէջ արձանացնել հայ երգին ամենանուիրական ոգեղինացումի, անգուգական վարպետի ու սիրելի՛ Վարդապետի՝ Կոմիտասի յուշարձանը՝ Հայոց Յեղասպանութեան աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակաց իբրեւ ամենանուիրական եւ հաւաքական խորհրդանիշ:

Վերը յիշեցի, թէ դարուս արշալոյսին, երբ կ'արթննայ պատմութեան խիղճը վերականգնելու համար հայութեան նկատմամբ ոտնահարուած, զգետնուած ու բազմիցս յօշոտուած, արեան ահագին ճապարհներուն մէջ խեղդուած արդարութիւնը, երբ արեւելքէն արեւմուտք, ազգեր եւ պետութիւններ ցեղասպանութեան մասին յատուկ բանաձեւերով կը ճանչնան 24 Ապրիլ 1915 թուականի օսմանեան պետութեան կողմէ իրագործուած մեր ազգային ողբերգութեան իրողութիւնը, ուղղակի հարց կը ծագի, որ արդեօք ժամանակը չէ՞, որ կարգ մը մեր ազգային-եկեղեցական տօներէն իր քաղաքական եւ համազգային նշանակութեամբ շատ աւելի խօսուեն, հաւաքական եւ անհատական ապրումներու ծնունդ տուող Հայոց Յեղասպանութեան սգատօնը՝ 24 Ապրիլը ներկայ տօնակատարութեան ձեւերէն քայլ մը անդին անցնի ու հոգեւոր-բարոյական, նամանաւ'նդ կրօնական իմաստով փոխադրուի աւելի բարձր մակարդակի մը վրայ: Յեղասպանութենէն շուրջ դար մը ետք, հիմա արդէն ժամանակը չէ՞, որ հաւատքի, հայրենիքի եւ ազգային սրբութիւններուն համար իրենց կեանքը զոհաբերած մեր մէկուկէս միլիոն նահատակներուն սգահանդէսը հոգեհանգստեան արարողութիւններու ծիրէն վեր բարձրացուի եւ ուղղակի պատարագի արարողական ոլորտի մէջ գնահատուի սուրբերու յիշատակութեան կարգով:

Հարցը կրկին միեւնոյնն է՝ ո՞վ սուրբ պիտի հռչակէ Հայոց Յեղասպանութեան աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակները. ո՞վ իր սրբոց լուսա-

պսակ դասուուն մէջ պիտի ընդգրկէ Հայոց նահատակ մտաւորականութեան եւ հոգեւորականութեան սքանչելի փաղանգը՝ մարտիրոսացած ժողովուրդի մը հաւաքականութեան հետ, եթէ ոչ Եկեղեցին Հայաստանեայց, որուն սուրբ աւագանին ծնունդներն էին Ապրիլեան Նահատակները եւ ձեռնասուները՝ անոր ջամբած հոգեւոր կրթութեան: Ուրեմն, անգամ մը եւս, միայն ու միայն Հայ Եկեղեցին է սրբազան պարտականութիւնը արդէն իսկ ընդհանրացած համոզումը եւ ամենուն համբուրելի դարձած իրողութիւնը պաշտօնականացնելու եւ եկեղեցական կարգով սրբադասելու 1915 թուականի մեր բոլոր նահատակները:

Սակայն ինչո՞ւ այս յայտարարումը, երկարատեւ եւ անընդունելի այս վերապահութիւնը, սեփական աւանդութեան եւ վարդապետական սկզբունքներուն նկատմամբ ինքնավստահութեան պակասը, իր իսկ ծոցին մէջ նոր որակ մը երկնելու երկչոտութիւնը, երբ, ինչպէս վերը բազմիցս շեշտուեցաւ, Ապրիլեան Նահատակները սրբադասելու ուղղութեամբ համագլխային ենթահողը արդէն վաղուց պատրաստ է, իսկ Կոմիտաս Վարդապետ՝ իբրեւ վաւերական խորհրդանիշը ազգի մը ողբերգութեան, արձանացած է ոչ միայն Հայաստանի եւ Սփիւռքի շատ մը քաղաքներուն, այլ նաեւ այսօր՝ Փարիզի սրտին մէջ, ինչպէս ի տես հայերու, նոյնպէս եւ ի գիտութիւն ամբողջ օտարներու:

Թող ներուի մեր յանդգնութիւնը, եթէ երբեք պահանջք աւելի ակներեւ դարձնելու տրամադրուածութեամբ կրկինք հարցադրումը՝ ինչո՞ւ կը յայտարարէ Հայ Եկեղեցին սրբադասելու պետական-քաղաքականօրէն ծրագրուած 1915 թուականի Յեղասպանութեամբ վկայողական մահուամբ նահատակուած իր միլիոնաւոր զաւակները. միթէ չսրբացող Ընդհանրական եւ Առաքելական Ս. Եկեղեցին քրիստոնէութեան առաջին եւ հետագայ դարերուն Հոռոմի կրկնաներուն մէջ եւ այլուր խոստովանողական մահուամբ նահատակուած իր վկաներէն շատերը. բարի նախանձով եւ անկեղծ յուզումով մը չի՞ ճմլուիր մեր սիրտը, երբ ականատես կ'ըլլանք այն գեղեցիկ ու հոգեպարար արարողութիւններուն, որոնց ընդմէջէն Հոռոմէական Կաթողիկէ Եկեղեցին գրեթէ ամէն օր նորանոր երանելիներ եւ սուրբեր կը կանոնականացնէ՝ մի՛շտ արգասաւորելով իր հոգեւոր կեանքը եւ խանդավառելով իր հոծ հաւատացեալներուն ջերմեռանդութիւնը:

Ինչո՞ւ չի սրբացներ Հայ Եկեղեցին իր անզուգական Վարդապետը, իր «Ամենայն Հայոց Երգի Վեհափառը», «Մեսրոպ Մաշտոցը մեր երգին», «գիրն ու տառը» անոր՝ եղեռնաբախտ Կոմիտասը, երբ գերյարգելի այլ ճակատագրակից մը՝ Շուքրալլահ Իգնատիոս Մալոյեան, 1915ին զոհուած Մարտինի հայ կաթողիկէ արքեպիսկոպոսը, 7 Հոկտեմբեր 2001 թուականին Վատիկանի մէջ, հանդիսաւորապէս երանելի կը հռչակուի Յովհաննէս Պօղոս Բ. Պապին կողմէ, զայն օր մը Կաթողիկէ Եկեղեցւոյ սրբոց դասին մէջ ներգրաւելու բարի դիտաւորութեամբ:

Քրիստոնեայի մը կեանքին բարձրագոյն չափանիշը կատարելութեան հասնիլն է: Քրիստոս իր հետեւորդներուն կը պատգամէ. «Կատարեալ եղէ՛ք, ինչպէս ձեր երկնաւոր հայրը կատարեալ է»<sup>1</sup>: Եկեղեցւոյ ըմբռնումով, այս կատարելութիւնը ՍՐԲՈՒԹԵԱՆ մակարդակն է գոր Եկեղեցին կը հաստատէ եւ սուրբ կը հռչակէ տուեալ անձը կամ հաւաքականութիւնը, հիմք ունենալով

անոնց հաւատքի մասին տուած ճշմարիտ վկայութիւնը:

Սրբադասուծը կը հանդիսանայ ուրեմն Եկեղեցիին շնորհած մեծագոյն գնահատականը անոնց, որոնք հաւատքի իրական վկայութեամբ, խոստովանութեամբ, ընդհուպ մինչեւ արեան նահատակութեամբ վառեալ ի սէրն Քրիստոսի՝ կը դառնան լուսաւոր ջահեր Քրիստոնէութեան, Աւետարանի ճշմարտութեան եւ գերազանց ախոյեաններ եկեղեցւոյ դործնական եւ ջերմեռանդական կեանքին համար:

Այստեղ տեղին է հարցումը՝ ունի՞ արդեօք Հայ Եկեղեցին սուրբեր: Կամ, եթէ երբեք ունի, ինչպէս՞ կը կատարուի սրբադասուծը Հայ Եկեղեցւոյ մէջ:

Հայ Եկեղեցին, իբրեւ կարեւոր մէկ միաւորը Ընդհանրական եւ Առաքելական Ս. Եկեղեցիին, սկիզբէն գնահատած է վասն Յիսուսի եւ հայրենեաց իրենց կեանքը տուած իր հաւատացեալ զաւակներն ու նահատակները, զանոնք դասելով իր սրբոց լուսապսակ դասին մէջ:

Մեր Եկեղեցւոյ տօնացոյցը մեր հաւատքի լուսաճաճանչ երկնակամարին վրայ կը ցոլացնէ սրբոց հոյլ մը, որուն 204 տօնելի անունները (աստուածաշնչական սուրբերէն զատ), Տիեզերական եւ Ընդհանրական Եկեղեցիէն<sup>2</sup> ընդունուած ըլլալով, օտարազգի են, իսկ անոնց քով 64ը միայն զուտ հայկական ծագում ունին: Հայազգի սուրբերու շարքին, այստեղ հաւաքականներն ալ իբրեւ մէկ միաւոր նկատի ունենալով, մեր տօնացոյցը մեզի կը ներկայացնէ ժամանակագրական հետեւեալ պատկերը.

1. Ա. դարէն՝ Սանդուխտ կոյս, Ադդէ Եդեսիոյ հայրապետ եւ Աբգար Թագաւոր:
2. Բ. դարէն՝ Ոսկեանք, այսինքն՝ Ս. Ոսկի 4 ընկերներով, եւ Սուքիասեանք, այսինքն Ս. Սուքիաս իր 18 ընկերներով:
3. Դ. դարէն՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Հռիփսիմեանք, այսինքն՝ Ս. Հռիփսիմէ իր 33 ընկերներով, Գայիանեանք, այսինքն՝ Ս. Գայիանէ իր 2 ընկերներով, Նունէ եւ Մանէ կոյսեր, Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ եւ Ներսէս հայրապետներ, Գրիգորիս, Դանիէլ եւ Խաղ եպիսկոպոսներ, Տրդատ Թագաւոր, Աշխէն Թագուհի, Խոսրովադուխտ արքայաքոյր, Անտոն եւ Կրօնիզէս ճգնաւորներ, նաեւ Ստեփանոս Ուլնեցի իր ընկերներով:
4. Ե. դարէն՝ Ս. Սահակ եւ Յովսէփ հայրապետներ, Ս. Մեսրոպ Մաշտոց, Սահակ եւ Թաթիկ եպիսկոպոսներ, Եղիշէ, Մովսէս եւ Դաւիթ Թարգմանիչներ, Ղեւոնդ, Մուշեղ, Արշէն, Սամուէլ, Աբրահամ եւ Խորէն քահանաներ, Քաջաջ եւ Աբրահամ սարկաւազներ, Ատոմեանք, այսինքն՝ Ատոմ եւ Մանածիհր զօրավարներ իրենց գունդերով, Վարդանանք, այսինքն՝ քաջն Վարդան Մամիկոնեան, Խորէն Խոռխոռունի, Արտակ Պալուենեաց, Տաճատ Գնդուհի, Հմայեակ Դիմաքսեան, Արսէն Ընծայնոց, Վահան Գնուհեաց, Գարեգին Սրուանձտեան եւ Ներսէհ Քաջբերունի նախարարներ, 1036 վկաներով, Թաթուլ, Վարոս եւ Թուճաս ճգնա-

ւորներ, ինչպէս նաեւ Շուշան Վկայուհի:

5. Զ. դարէն՝ Եօթը խոտածարակներ, Գրիգոր-Ռաժիկ եւ Աստուածատուր-Մախոժ վկաներ:
6. Է. դարէն՝ Դաւիթ Դըւնեցի:
7. Ը. դարէն՝ Վահան Գողթնացի, Սահակ եւ Համազասպ Արծրունիներ, ինչպէս նաեւ Յովհաննէս Օճնեցի հայրապետ:
8. Թ. դարէն՝ Սահակ եւ Յովսէփ Կարնեցիներ:
9. Ժ. դարէն՝ Ս. Գրիգոր Նարեկացի:
10. ԺԲ. դարէն՝ Ս. Ներսէս Շնորհալի հայրապետ, Գոհարինոս, Ծամիգոս, եւ Տուքիկոս վկաներ:
11. ԺԴ. դարէն՝ Յովհան Վարդապետ Որոտնեցի:
12. ԺԵ. դարէն՝ Ս. Գրիգոր Վարդապետ Տաթեւացի<sup>3</sup>:

Տօնացոյցիս ներկայացուցած սրբոց ցանկը մեզի ցոյց կու տայ ահաւասիկ, որ մեր Եկեղեցւոյ վերջին սուրբերը՝ Յովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի վարդապետներ, մին՝ ԺԴ., իսկ միւսը՝ ԺԵ. դարերուն ապրած հեղինակութիւններ են, որոնք հաւանաբար Հայ Եկեղեցւոյ սրբոց լուսապսակ դասը անցած են 1774 թուականին, շնորհիւ Սիմէոն Ա. Երեւանցի<sup>4</sup> Կաթողիկոսի (1763–1780) կազմած եւ տպագրած տօնացոյցին:

Արդարեւ, ԺԵ. դարէն մինչեւ մեր օրերը անցած են շուրջ 600 երկար տարիներ՝ հայ ժողովուրդի կեանքին մէջ լեցուն նահատակութեանց ու քրիստոնէական հաւատքի վկայաբանութեանց պատմութիւններով. սակայն Հայ Եկեղեցին այնուհետեւ ոչ ոք սուրբ յայտարարած է, ոչ ոք սրբացուցած կամ ընդգրկած է իր ծիսական տօնացոյցին մէջ:

ԺԵ. դարէն ետք, դադար<sup>5</sup> է Հայ Եկեղեցին սուրբեր ունենալէ: Միթէ անհրաժեշտութիւն չի<sup>6</sup> նկատեր ան իր կենսունակութեան մասին վկայող նաեւ նոր սուրբերու ներկայութեանը իր պաշտամունքին ու հաւատքի կեանքին մէջ: Չէ՞ որ մեր պատմութիւնը լեցուն է նահատակութիւններով, իսկ մեր պատմագրութիւնը՝ քրիստոնէական հաւատքի ճշմարիտ վկայաբանութիւններով: Արդեօ՞ք այնքան շատ նահատակ ու վկայ ունեցանք, որ մեր Եկեղեցւոյ նուիրապետութեան համար անկարելի եղաւ անոնց մէջէն ընտրութիւն կատարել: Ժամանակ չունեցա՞ւ միթէ մեր Մայր եւ Ս. Եկեղեցին Հայկական զբաղելու իր կարեւիքը զաւակներով: Անտարակոյս՝ ո՛չ: Իրողութիւնը մինչդեռ այն է, որ Եկեղեցին ի՛նքը, բառիս իսկական առումով, միասնաբար իր ժողովուրդի հետ դարձած է վկայեալ ու վկայող ամբողջութիւն մը, կղզեակ մը քրիստոնէական ջինջ հաւատքի՝ մահմետականութեան, այլակրօնութեան, անկրօնութեան, ինչպէս նաեւ երբեմն անաստուածութեան այլամերժ ովկիանոսին մէջ: Եկեղեցին ինք մարտիրոսացած է իր ժողովուրդին հետ, ապա յառնած է հուրի եւ մոխիրներու մէջէն որպէս նոր փիւնիկ, վերստին կեանք եւ վերապրելու անընկճելի ոգի բաշխելով իր հայկազնեան հօտին:

Այսօր սակայն պարագաները հիմնապէս փոխուած են: Մղձաւանջային եւ երկար դարերու անձկայրեաց տենչէ, սրտաբուխ աղօթքէ ու տենդոտ անուրջէ

ետք, հայ ժողովուրդը կրցաւ իր նախնեաց սուրբ հողի արեւելեան հատուածին վրայ տեսնել ծածանիլը Եռագոյնին՝ «արտասուքով լուացած» ու փայփայած իր երազին գերագոյն իրականացումը: Հայրենի ժողովուրդը, նիւթական եւ զօրեղ մասնակցութեամբը նաեւ գաղթաշխարհի հայութեան, արդար պայքարով կերտած է ի վերջոյ իր պետականութիւնը, իսկ երկրին մէջ ստոյգ տեսանելի է արշալոյսը հոգեւոր աննախընթաց գարթօսքի:

Պէտք ունի՞ հայ ժողովուրդը նոր վկաներու, ի մասնաւորի՝ Ապրիլեան Նահատակներու եւ Կոմիտաս Վարդապետի սրբադասումին: Այո՛, աւելի՛ քան երբեք՝ իր քաղաքական եւ կրօնական նշանակութեան անգնահատելի հեռանկարով:

- ա) Կրօնքին մէջ՝ տառապող արդարը անպայման պէտք է գտնէ իր կատարեալ աստուածարդարացումը:
- բ) Հայ ժողովուրդին դէմ գործուած քաղաքական անարդարութիւնը պէտք է ճանաչու՞մ գտնէ արդարութեան վերականգնումով եւ հատուցումով:

Այս ուղղութեամբ կարեւոր փաստ մը արձանագրուեցաւ 1989 թուականին, երբ Հայ Եկեղեցւոյ նուիրապետական զոյգ Աթոռներու միջեւ, միութենական աշխատանքներու ընդհանուր ծիրին մէջ, 29 Ապրիլ թուագրութեամբ եւ ստորագրութեամբ երջանկայիշատակ զոյգ Հայրապետներու՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներու, հրապարակուեցաւ միասնական հաղորդագրութիւն<sup>5</sup> մը, ուր կը յայտարարուէր թէ՛ անհրաժեշտ քայլեր պիտի առնուին սրբադասելու համար 1915ի Ապրիլեան աւելի քան մէկ ու կէս միլիոն մեր նահատակները:

Այս իմաստով, առաջարկները կը զարգանային երկու ուղղութիւններով: Երբ Կիլիկեան կողմը կը յանձնարարէ հաւաքական սրբադասումը Ապրիլեան բոլոր նահատակներուն, էջմիածնական կողմը՝ գլխաւորութեամբ Երջանկայիշատակ Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի, աւելի յարմար կը նկատէր սրբադասումը խորհրդանշական անձի մը, որպիսին էր Կոմիտաս Վարդապետ:

Հայ Եկեղեցւոյ սուրբերուն ցանկը ներկայացնելու առթիւ, վերը տեսանք, որ անհատական սուրբերու յիշատակութիւններէ բացի, մեր տօնացոյցը ահազին տեղ տրամադրած է նաեւ սուրբերու հաւաքական տօնախմբումներու: Այս առնչութեամբ պերճաբառ օրինակներ կը հանդիսանան Ոսկեանց, Սուքիասեանց, Հռիփսիմեանց, Գայիանեանց, Թարգմանչաց, Ղեւոնդեանց Քահանայից, Վարդանանց Զօրավարաց, Քառասնից Մանկանց տօները եւլին: Հնագոյն ժամանակներէն ի վեր, ինչպէս Ընդհանրական, նոյնպէս եւ Հայ Եկեղեցին կիրարկած է իմբային կամ հաւաքական սրբոց յիշատակութիւնները, առանց պարտաւորուած գգալու տուեալ խումբը կամ հաւաքականութիւնը կազմող անունները անհատ առ անհատ նշելու: Նման սովորութեան հիմք ծառայած է ակներեւ դարձնել դէպքը, պատմական եղելութիւնը եւ տրուած հաւատքին վկայութիւնը, քան մանրամասնութիւններն ու անուանական ցանկերու գրանցումները: Յաճախ Եկեղեցին գոհացած է համապատասխան խումբին կամ աւելի մեծ ու փոքր հաւա-

քականութիւններուն մէջէն յիշատակել երեւելի անուն մը կամ քանի մը անուններ միայն, դէպքի տալով համապատասխան դրոշմ եւ նկարագիր, զորօրինակ՝ Հռիփսիմեանց, Գայրիանեանց, Թարգմանչաց Վարդապետաց, Ղեւոնդեանց Քահանայից, Վարդանանց Զօրավարաց տօները եւլն։ Սրբոց Վարդանանց Զօրավարաց 1036 վկաներէն Վարդան Մամիկոնեանի հետ յիշատակուած են նախարարներու 9 անուններ միայն, բայց Վարդանանց բացատրութեան ներքոյ, ինչպէս նշուեցաւ, սրբադասուած են 1036 վկաներ։

Վերոյիշեալ զոյգ առաջարկներն ալ իրականացնելու առումով սեւէ կրօնական կամ ընկերային անպատեհութիւն չի կրնար ըլլալ։ Հայ ժողովուրդին համար համբուրելի են երկու իրականութիւններն ալ, վասնզի ան արդէն իսկ իր հաւաքական ապրումներուն եւ գիտակցութեանը մէջ սրբացուցած է զանոնք. Եկեղեցիին առաքելութիւնը պիտի ըլլայ միայն պաշտօնականացնել զայն։ Եւ կամ՝ երկու սրբութիւններն ալ ոչ թէ անջատաբար, այլ միացնելով իրբեւ պատմական մէկ եղելութիւն, քրիստոնէական հաւատքի մասին տրուած մէկ վկայութիւն, հաւաքական մէկ եւ եզակի մարտիրոսութիւն մը յիշատակելով տօնախմբել։

Սակայն այս մասին կարելի է հանգամանօրէն անդրադառնալ աւելի ուշ, մինչ այդ անգամ մը եւս հարց տանք, թէ ի՞նչ պայմաններու ներքոյ կամ ինչպէ՞ս կը կատարուի սրբացումը Հայ Եկեղեցւոյ աւանդութեան մէջ։ Երեւոյթը ներկայացնենք զուգահեռաբար՝ նկատի ունենալով սրբադասուածի մասին վերոյիշեալ երկու պարագաները։

(Շար. 1)

Ժընեւ  
24 Ապրիլ 2004

ԴՈՒՏ. ԱԲԷԼ ՔՀՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1) Մատ Ե., 48։
- 2) Հրեշտակներու եւ աստուածաշնչական անուն կրող սուրբերը Տիեզերական Եկեղեցիին ցանկէն դուրս ձգելով, կ'ունենանք քոյր եկեղեցիներու հետեւեալ ցանկը, որոնց սուրբերը դարձած են տօնելի նաեւ Հայ Եկեղեցւոյ մէջ. Անտիոքի, Կիլիկիոյ, Միջագետքի, Երուսաղէմի, Կիպրոսի, Աղեմսանդրիոյ, Եթովպիոյ, Կեսարիոյ, Սեբասիոյ, Լիկաոնիոյ, Պոնտոսի, Եփեսոսի, Կոստանդնուպոլսոյ, Թեսալիոյ, Գաղատիոյ, Բիւքանիոյ, Հոովմայ, Հիւսիսային Ափրիկէի եւ Պարսից Եկեղեցիներ։ (Հմտ. Օրմանեան Մաղափա Արք., Հայոց Եկեղեցին, Անթիլիաս, 1952, էջ 166-170)։
- 3) Հմտ. Անդ., էջ 166-171։
- 4) Տե՛ս Օրմանեան Մաղափա Արք., Ազգապատում, Բ. Կ. Պոլիս, 1914, էջ 3101-3104։
- 5) Տե՛ս «Էջմիածին», Դ-Ե-Ձ, 1989, էջ 27-29. նաեւ Աշնեան Մեսրոպ Արք., Սուրբերը եւ Մենք, Հայ Եկեղեցւոյ Սուրբերը եւ Ապրիլեան Նահատակաց Սրբադասման Հարցը, Նիւ Եորք, 1993, էջ 40-43։

# ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՆՎԱՅԵԼ «ԳՐԱԽՕՍԱԿԱՆ»Ի ՄԸ ՄԱՍԻՆ

(Շարունակութիւն մեր նախորդ թիւէն)

## 10. Անճիշդ վկայութիւն թէ ճիշդ Պատմութիւն

«Այլ Անճիշդ Վկայութիւններ» նիւթին տակ, Քաղկեդոնի ժողովին մասին անդրադառնալով կը գրէ. «Թութիկեան կատարելապէս անձանօթ է Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան...Մեր եկեղեցւոյ Վարդապետութիւնը՝ «Միաւորեալ մի Բնութիւն» Լեւոն Պապին կը վերագրէ»: Դարձեալ անճիշդ...: Ես ոչ մէկ տեղ Հայց. եկեղեցւոյ «Միաւորեալ մի Բնութիւն» վարդապետութիւնը Լեւոն Պապին վերագրած եմ: Շփոթութիւնը Փօսթաճեանի մտքին մէջ է: Գրքիս մէջ իմ գրածս հետեւեալն է. «Քաղկեդոնի ժողովը մերժեց Եւտիքէսի եւ Նեստորի աստուածաբանական տեսակէտները Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութեանց մասին եւ ընդունեց Լեւոն պապին բանաձեւը, ըստ որուն Քրիստոսի երկու բնութիւնները մէկ անձին մէջ կը գործեն կատարեալ ներդաշնակութեամբ» (էջ 56): Ապա, աւելցուցած եմ թէ՛ Հայ Եկեղեցին կը մերժէ Քաղկեդոնի ժողովին որոշումները հետեւեալ պատճառներով. -

ա) Հայեր չմասնակցեցան այս ժողովին, որովհետեւ անոնք կենաց եւ մահու պայքար կը մղէին Ե. Դարու կիսուն՝ իրենց կրօնքն ու հայրենիքը պաշտպանելու համար պարսից Սասանեան կայսրութեան դէմ:

բ) Հայ Եկեղեցիին նուիրապետութիւնը իրագրել ըլլալով Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիներու մրցակցութեան կը խուսափի կողմ բռնելու ճնշումի ներքեւ:

գ) Նկատի ունենալով որ Հայ Եկեղեցին արդէն ընդունած էր տիեզերական երեք ժողովները (Նիկիոյ 325ին, Պոլսոյ 381ին եւ Եփեսոսի 431ին) հարկ չի տեսներ նոր տիեզերական ժողովներու եւ նոր բանաձեւերու:

դ) Հայ Եկեղեցին կը ցուցաբերէ այն դիրքը թէ տիեզերական ժողովները ըլլալու են տիեզերական՝ ներկայացնելով ուղղափառ բոլոր եկեղեցիները եւ բոլոր եկեղեցական Աթոռները: Ըստ Հայ Եկեղեցիին, Քաղկեդոնի ժողովը չի լեցնէր այդ պայմանները, եւ անոր բանաձեւած վարդապետութիւնները ընդհանրական չեն:

ե) Հայ Եկեղեցին կը մերժէ ընդունիլ Քաղկեդոնի ժողովին որոշումները եւ անիրաւորէն կ'ամբաստանուի Հռովմի եւ Բիւզանդիոնի Աթոռներուն կողմէ իբրեւ Եւտիքեան (Eutychian) կամ Միաբնակ (monophysite) եկեղեցի: Այնուհետեւ դարեր շարունակ յոյն ուղղափառ եւ Հռովմայ կաթողիկէ եկեղեցիները կը ջանան մերթ համոզել, եւ մերթ սպառնալ Հայ Եկեղեցիին որպէս զի Քաղկեդոնութեան հպատակի: Երբ կը ձախողին՝ թշնամական ոգիով կը վարուին անոր հետ (էջեր 56-57):

## 11. Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Ծագման Մասին

Դարձեալ Կաթողիկէ Եկեղեցւոյ ծագման մասին. յիշած եմ քանի մը տեսութիւններ, որ Փօսթաճեան կ'անուանարկէ «մէկը՝ միւսը հերքող կարծիք-

ներ»։ Ըստ իրեն, ամէն մարդ պէտք է հաւատայ մէկ տեսակէտի։ Այս պարագային ինք կը հաւատայ թէ 1831ը պէտք է նկատել որպէս սկիզբ այդ յարանուանութեան. բայց, կան ուրիշներ որ այդպէս չեն հաւատար։ Օրինակ, այդպէս չէր հաւատար կարտինալ Աղաճանեան, Սահակ Եպսկ. Կոզեան եւ համայն հայ կաթողիկէ համայնքը։ Արդարադատ պատմագէտը պէտք է ներկայացնէ բոլոր տեսակէտները եւ դիրքերը եւ պէտք չէ նախապաշարեալ անվայել մակդիրներ փակցնէ անոնց վրայ։ Օրինակ, վայել չէ կարտինալ Աղաճանեանի «Թուղթ»ը «տիրահռչակ» կոչել, ոչ ալ Կոզեանի «Հայոց Եկեղեցին» «յերրւբանքներու եւ սուտերու հաւաքածոյ» եւ այս վերջինը հռչակել «Հռովմի դաւանութիւնը իրեն համար ազգութիւն համարող» մէկը, որ իբրեւ թէ Եղիշէ Պատրիարք իր հատու գրէշով զայն վերածած է մարդկային խլեակի մը»։ Իմ գրքէս «Կ'ըսեն թէ» երկու բառերը իրենց յարակցութենէն դուրս հանելով զիս կը քննադատէ թէ՛ «Կ'ըսեն թէ»ով պատմութիւն չի գրուիր։ Մենք ատիկա շատ լաւ դիտենք, բայց ինչո՞ւ չի յիշեր նաեւ այն որ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ծագման մասին կը յիշենք քանի մը տեսութիւններ՝ վկայակոչելով կաթողիկէ եւ ոչ-կաթողիկէ պատմաբաններ։

## 12. Ո՞վ է Տիեզերականութեան Հաւատացողը

Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մասին իմ գրածներս իրենց պարունակէն կամ յարակցութիւնէն (context) դուրս հանելով, Փօսթաճեան ինծի կը վերագրէ «Հռովմէական Եկեղեցւոյ Տիեզերական Եկեղեցի լինելութիւնը»։ Ապա, հարց կու տայ ո՞ր է «Հայ Բողոքական Եկեղեցւոյ» տեղը այս «Տիեզերական Եկեղեցւոյ մէջ»։

Ես իմ գրքիս մէջ ո՛չ մէկ տեղ գրած եմ թէ Հռովմէական Եկեղեցին ինծի համար, կամ իմ պատկանած Հայ Աւետարանական Եկեղեցւոյ համար Տիեզերական Եկեղեցի է։ Բայց յիշած եմ թէ՛ Հայ Կաթողիկէ Եկեղեցին է որ կը հաւատայ անոր։

Ինչ կը վերաբերի իմ «մերձաւորութեան հանդէպ կաթողիկ յարանուանութեան» ատիկա չեմ ուրանար, որովհետեւ իմ մերձաւորութիւնս նոյնն է բոլոր յարանուանութեանց նկատմամբ։ Ես «բարեկամ»ներու եւ «թշնամի»ներու ցանկ չունիմ։ Ես ունիմ իմ անձնական համոզումները, բայց նաեւ կը յարգեմ ուրիշներու համոզումները։

Ուշիմ ընթերցողը յստակ կերպով կրնայ տեսնել այն այլամերժ ոգին որ յօդուածագիրը կը ցոլացնէ։ Ան կը տեսնէ նաեւ թէ Փոսթաճեան որչա՛փ ատելութիւն ունի Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական յարանուանութեանց հանդէպ։ Եթէ ինք կը խորհի թէ այս ձեւով Հայց. Առաքելական Եկեղեցին կը պաշտպանէ չարաչար կը սխալի...։

## 13. Համայնագիտարա՞ն թէ Համայնապատկեր

«Կարեւոր Մոռացումներ» խորագրին տակ Փօսթաճեան դիտել կու տայ թէ՛ իմ «Կարեւոր Դէպքեր եւ դէմքեր» գրքիս մէջ մոռցած եմ յիշելու կարգ մը աղանդաւորներու մասին պատմագիր Կարապետ Եպսկ. Տէր Մկրտիչեանին անունը եւ «Կանոնագիրք Հայոց» գիրքը։ Կ'ընդունինք։ Բայց կ'ուզենք յիշեցնել այն պարագան որ այս գիրքը համայնագիտարան մը չէ հայ քրիստոնէութեան մասին։

Գրքին «Ցառաջաբան»ին մէջ յստակ կերպով յայտնած ենք թէ՛ «սոյն հատորը մասնագիտական գործ մը չէ. ան գրուած է ընդհանուր համայնապատկեր մը տալու հայ քրիստոնէական պատմութեան մասին՝ անոնց համար որոնք իրազեկ չեն մեր եկեղեցական-ազգային պատմութեան, յատկապէս նոր սերունդին համար»:

#### 14. Ծիշդ եւ Անճիշդ Վկայութիւններ

Իր յօդուածին վերջին մասին մէջ, «Վեր. Վ. Թուլթիկեան եւ Հայաստանեայց Եկեղեցին» վերտառութեամբ, Թորգոմ Փօսթաճեան «մէյ մը սալին, մէյ մը մուրճին զարնելով» կարգ մը ճիշդ բայց կարգ մըն ալ անճիշդ վկայութիւններ կ'ընէ: Ծիշդ է որ ես աւելի քան քառասուն տարիներ կը ծառայեմ Հայ Աւետարանական Եկեղեցիին եւ իմ ծառայութեան ամբողջ տեւողութեան միշտ յարգալից վերաբերմունք ցուցաբերած եմ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ: Ծիշդ է նաեւ Փօսթաճեանի այն վկայութիւնը որ ես միշտ ջատագով եղած եմ եկեղեցական միութեան: Այդպէս եղած եմ եւ այդպէս ալ կը մնամ: Ոչ միայն 1992ին, ինչպէս ինք կը յիշէ իր յօդուածին մէջ, այլ իմ ամբողջ հանրային ծառայութեանս 45 տարիներու ընթացքին «Մայր եւ որդի»ի միացման հաւատացող եղած եմ: Բայց անճիշդ են Փօսթաճեանի կարգ մը այլ վերագրումներն ու ամբաստանութիւնները իմ անձին եւ իր գործին մասին»:

Անճիշդ է Փօսթաճեան երբ կը գրէ. «Այն օրէն, սակայն, երբ Վեր. Վ. Թուլթիկեան եղաւ նախագահը AMAAին (իմա, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան.- Վ.Յ.Թ.) ան մէկէն դարձաւ հոգեփոխ»: Նախ եւ առաջ, ես ոչ մէկ ատեն նախագահ եղած եմ AMAAի: Ուրիշ պաշտօններ վարած եմ եւ դեռ կը շարունակեմ վարել, բայց անճիշդ է որ ես AMAAի նախագահ եմ: Անոնք որ գիտ կը ճանչնան, գիտեն թէ «Հոգեփոխ»ութիւնը իմ նկարագրիս եւ խառնուածքիս հետ խոտոր կը համեմատի: Աստուած գիտէ եւ մարդիկ ալ գիտեն թէ՛ «հոգեփոխ»ի պիտակը որուն աւելի կը յարմարի...:

#### 15. Անփիմն Ամբաստանութիւններ

Յօդուածագիր Փօսթաճեան գիտ կ'ամբաստանէ թէ՛ ես փորձ մը ըրեր եմ «բռնաբարելու Հայաստանեայց Եկեղեցւոյ անուններն ու իրաւասութիւնները»:

Դարձեալ անիրաւ զրպարտութիւն եւ անհիմն ամբաստանութիւն մըն է ասիկա: Հաւանաբար ան կ'ակնարկէ իմ մէկ յօդուածին, որ հայ մամուլին մէջ երեւցաւ Յունուար, 2001ին՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման 1700ամեակին առթիւ: Այդ յօդուածին մէջ երկու նախադասութիւններ վրդոված էին զինք: Առաջինը, մեր եկեղեցին կոչած էի «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի»: Երկրորդը, գրած էի թէ 1700ամեակի տօնակատարումը ոչ մէկ եկեղեցիի մենաշնորհն է. այլ բոլոր հայ եկեղեցիներուն՝ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական:

Ի պատասխան իմ յօդուածին, Փօսթաճեան «Նոր Կեանք» հայկական շաբաթաթերթի Փետրուար 15, 2001 թիւին մէջ գրած էր յօդուած մը «Հայց. Եկեղեցւոյ Անունները Աճուրդի Հանուած Ձեն» վերտառութեամբ:

Այդ յօդուածին մէջ ան մեր եկեղեցին կը կոչէ «Բողոքական յարանուանութիւն ... որ յետսամուտ, օտար դաւանութիւն մըն է մեր մէջ ... յարանուանութիւն մը որ օտարներէն եկած է մեր մէջ ... Հայաստանցիներուն պատկանող դաւանութիւն մը չէ»: Ուրեմն կ'եզրակացնէ Փօսթաճեան. 1700ամեակի տարեդարձը յատկապէս կը պատկանի Հայց. Ս. Եկեղեցւոյ եւ անոր մենաշնորհը»:

Մենք չուզեցինք պատասխանել այդ յօդուածին որոշ նկատումներով, բայց մէկէ աւելի պատասխանողներ եղան: Բայց հիմա պատասխանենք իրեն.

ա. Ինչ կը վերաբերի մեր Եկեղեցւոյ անունին, անգամ մը եւս կը հաստատենք այն իրողութիւնը որ ան իր ծննդեան օրն իսկ կոչուած է «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի»: Աւետարանական Եկեղեցւոյ առաջին պատմաբանը, Ստեփան Իւթիւճեան, իր «Մագումն եւ Ընթացքն Հայ Աւետարանականութեան Ի Հայս» (1914) յտակ կերպով կը վկայէ «Բարեպաշտութեան Միաբանութիւն անուանեալ Հայկազեան Խումբ»ը որ կը հիմնադրէր առաջին Հայ Աւետարանական Եկեղեցին՝ Յուլիս 1, 1846ին, իրենց օգնական եօթը Ամերիկացի եւ երկու Սկոտլանդացի աւետարանիչներ հարց կու տան. «Դուք որ կը փափաքէք եկեղեցական կազմակերպութիւն առնուլ այժմ, ի՞նչ յարանուանութիւն ընտրած էք կամ ո՞ր յարանուանութեան յարիլ որոշած էք», Միաբանութիւնը կը պատասխանէ ... «որոշած ենք Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի կազմուիլ եւ ո՛չ ուրիշ բան» (Տես էջ 167):

Պարոն Փօսթաճեան կրնայ վստահ ըլլալ թէ՛ մենք մեր եկեղեցւոյ անունը «աճուրդ»էն (իւր բառը գործածելով. - ՎՅԹ) առած չենք, ոչ ալ մեր «Մայր Եկեղեցի»ին անունը բռնաբարած ենք: Ընդհակառակը, եթէ անուն մը բռնաբարող կամ չարափոխող մը կայ ինքն է երբ դեռ կը յամառի մեր եկեղեցին «Հայ Բողոքական Եկեղեցի» եւ մեր յարանուանութիւնը «Հայ Բողոքականութիւն» անուանել:

բ. Իսկ ինչ կը վերաբերի յօդուածին մէջ յիշուած այն խօսքին թէ՛ «1700-ամեակի տօնակատարումը ոչ մէկ եկեղեցիի մենաշնորհն է, այլ բոլոր հայ եկեղեցիներուն եւ կազմակերպութիւններուն» հարց կու տանք թէ՛ ի՞նչ սխալ կայ այս խօսքին մէջ որ Փօսթաճեան զայն կը նկատէ «Հայց. Եկեղեցւոյ իրաւասութիւններու բռնաբարում»: Արդարեւ, 2001 թուականին, հայաստանի եւ Սփիւռքի մէջ կատարուող յարանուանական, միջ-յարանուանական եւ ոչ-յարանուանական բազմաթիւ եւ բազմապիսի տօնակատարութիւնները փաստօրէն հաստատեցին այն ճշմարտութիւնը թէ՛ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման 1700ամեակը՝ բոլոր հայ եկեղեցիներուն, կազմակերպութիւններուն եւ հայորդիներու առաձնաշնորհումն էր:

## 16. ԲՈՆԱԳՐՈՒԿ ԵԳՐԱԿԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ ծագման մասին գրածներս անգամ կը կոչէ «աններելի ստույթիւն»: Ինք կը կարծէ թէ՛ ես թուրքաբար կը կրկնեմ «Վեր. Պարգեւ Տարազճեանի յերիւրած ստույթիւնները»: Փօսթաճեան կրնայ վստահ ըլլալ որ «Դէպքերու եւ Դէմքեր»ու հեղինակը ես եմ եւ անոր բովանդակութեան

պատասխանատուն ալ ես եմ: Արդար չէ որ ինք ասոր կամ անոր բաներ վերագրէ, որոնց մէջ իր մեղադրեալները ոչ մէկ բաժին ունին: Մանաւանդ աններելի է զանոնք «ստորին արարած» կոչել եւ «կոտորուելիք մատներով սրբապղծութիւն» ընող մարդիկ անուանել...:

Աւելին, արդար եւ պարկեշտ չէ վերագրել խօսքեր եւ միտքեր, որոնք երբեք չեն պատկանիր հեղինակին: Զայն վարկաբեկելու համար խօսքեր իրենց յարակցութենէն դուրս հանելով եւ կամ նախադասութեան մը կէսը յիշելով բռնազբօսիկ եզրակացութիւններու յանգիլ՝ մտաւորականի համար անվայել բան է:

Գրքիս մէջ յիշուածը հետեւեալն է բառ առ բառ. «Բարեկարգիչները դարձան նաեւ քննադատները եկեղեցիին եւ կղերականութեան: Անոնք սկսան ա՛յն աստիճան քննադատել Հայ Եկեղեցիին աստուածաբանութիւնը, ծէսն ու արարողութիւնները որ նոյնիսկ ամբաստանեցին զայն թէ ան կորսնցուցած էր իր սկզբնական շրջանի, Նոր Կտակարանի հասկացողութեամբ, ունեցած պարզութիւնն ու մաքրութիւնը (տես Արփի, էջ 92) ու պնդեցին թէ եկեղեցին պէտք էր մաքրուէր իր ապականութենէն: ... Անոնք կատարեցին հետեւեալ յայտարարութիւնը. «Մենք ակնածանքով կ'ընդունինք մեր ազգային աւանդութիւնները, սրբազործուած մեր մարտիրոսներու արիւնով: Մենք կը սիրենք մեր հայ ազգը սրտանց եւ ամբողջ մտքով: Բայց ամէն բանէ աւելի թանկազին կը նկատենք խղճի ազատութիւնը եւ թոյլ պիտի չտանք որ ոչ մէկ իշխանութիւն, կամ աւանդութիւն կամ հրաման մեր ձեռքէն առնէ Քրիստոսի Աւետարանը»:

Արդ, ոչ Վեր. Թութիկեան, ոչ Վեր. Պ. Տարագճեան եւ ոչ ալ ոեւէ աւետարանական անուանած է Հայց. Առաքելական Եկեղեցին «ապականութեան Վայր»: Հարկ է նշել թէ ամէն եկեղեցի, Առաքելական ըլլալ թէ Աւետարանական, եւ կամ Կաթողիկէ, ունի իր թերութիւններն ու զանցառութիւնները, ապականութիւններն ու մեղքերը, որովհետեւ եկեղեցին որչափ որ աստուածային հաստատութիւն մըն է միանգամայն մարդկային հաստատութիւն մըն է բաղկացած մարդոցմէ որոնք սխալական եւ մեղանշական են: Սա երբեք չի նշանակեր թէ ան «Ապականութեան Վայր է»:

## 17. Հարկ Կա՞յ Անվայել Լեզու Գործածելու

Մարդոց հետ կրնանք համաձայնիլ կամ չհամաձայնիլ, կրնանք անոնց հետ համակարծիք ըլլալ կա՛մ տարակարծիք: Բայց մեր տարակարծութիւններու մէջ ներելի չէ անազնիւ եւ անբարեկիրթ ըլլալ՝ զանոնք կոչելով «անարգ թշուառական», «հոգեփոխ», «մարդկային խլեակ», «ստայօղ եւ անպարկեշտ» եւ անոնց գործերը նկարագրել որպէս «անարգ ստութիւն, յերիւրածոյ եւ գարշելի սրբապղծութիւն» եւ անիծել անոնց «կոտորուելիք մատները»:

Արդ, թող բանիմաց եւ արդարադատ ընթերցողը դատէ թէ արդեօք մեր տեսակէտները արտայայտելու համար հարկ կա՞յ անվայել լեզու գործածելու:

## 18. Եզրակացութիւն

Պէտք է վերջ տալ նախապաշարուածի ախտին, որ ջլատիչ ժանտախտի մը

նման կը սպառնայ մեր հաւաքական կեանքին: Նախապաշարումը եւ անկէ ծնունդ առնող հատուածական մոլեգնութիւնը, այլատեսաց եւ այլամերժ ոգին, չարիքի աղբիւր կրնայ դառնալ մեր հաւաքական կեանքին:

Մենք խորապէս կը հաւատանք ինչ որ յիշած ենք մեր գրքի վերջաբանին մէջ.

«ԻԱ. դարը նոր դարաշրջան մը կը բանայ Հայ ազգին առջեւ մէկէ աւելի իմաստներով: Նոր հրամայականներու եւ նոր կարելիութիւններու դէմ յանդիման է որ կը գտնուի ան: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է որ Հայ քրիստոնէութեան պատկանող Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները աւելի սերտ եւ ծրագրուած կերպով գործակցին իրարու հետ, ու հետապնդեն իրենց քրիստոսական հասարակաց առաքելութիւնը թէ՛ հայրենիքի, թէ՛ ալ սփիւռքի մէջ:

Պատմութեան այս հանգրուանին երեք Հայ յարանուանութիւններու համագործակցութիւնը անհրաժեշտ հրամայական մըն է, քանի որ իրենց գոտեմարտը Հայ ազգին գոյութեան համար է: Մինչ էջիւմէնիք շարժումին ճամբով միջ-յարանուանական մերձեցումներ տեղի կ'ունենան, որքան աւելի Հայ եկեղեցիները պէտք ունին սիրագօղ եւ համերաշխ լծակցութեան՝ որպէս զի վերարժարժուն անկորնչելի արժանիքները եւ սատարեն հայութեան համագլխին վերականգնումին»:

Թորգոմ Փօսթաճեանի գրութիւնը եւ նմանօրինակ յօդուածներ կամ գիրքեր երբեք չեն նպաստեր համագործակցութեան ոգիին:

Մեր խոր համոզումը եւ մեր հանրային ծառայութեան վարքագիծը միշտ այն եղած է թէ՛ ամէն Հայ եկեղեցիի եւ ամէն Հայ ղեկավար մարդու սրբազան պարտականութիւնն է ամրապնդել այն հաւատքը, թէ հայեր ինչ յարանուանութեան կամ գաղափարաբանութեան պատկանին նոյն ազգին զաւակներն են. արենակից եւ ճակատագրակից իրարու, որպէս մէկ ազգի զաւակներ՝ միասնաբար, ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի, կողք-կողքի աշխատելու են ի խնդիր մեր ազգի վերելքին եւ Քրիստոսի եկեղեցոյ պայծառութեան:

ՏԻԹՐՈՅԲ

ՎԵՐ . ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

## Նուիրատուութիւններ «Լոյս»ին

Մի ոմն

500 տոլար

Շաբէ Յակոբեան

100 տոլար

**Գրիգոր Փիտեճեան**

**«Անճինք Նուիրեալք» Շարականը**

**Միս հրատարակչատուն  
Ազգային Առաջնորդարան - Նիւ Եորք**

**Գառնիկ Բ. Գ.**

**Գրիգոր Նարեկացիի  
«Մեկնութիւն Երզոց Երզոյն Սողոմոնի»  
գրքին մեկնագիտութիւնը**

**Մոնթրէալ, 2004**

**Գրիգոր Ծ. վրդ Զիֆթճեան**

**Մարդ . ընտանիք . ընկերութիւն**

**Տպարան Կաթողիկոսութեան Հայոց  
Մեծի Տանն Կիլիկիոյ  
Անթիլիաս, 2004**



Մո՛րք Աստուած,  
անմահ եւ հօր.  
դուն որ սրբաբանութեամբ եւ  
անդադրում օրհնութեամբ  
կը պաշտուիս հրեղէն եւ  
անմարմին հրեշտակներուն կողմէ:  
Մենք, քու ձեռքովդ ստեղծուած բանաւոր հօտդ,  
քու առատարաշխ գթութիւնդ կը հայցենք:

Ընդունէ՛ մեր շրթներէն ու  
մեր սրտերէն դուրս եկած բանաւոր ընծաներդ:

Լեցո՛ւր մեզ ամէն առաքինութեամբ,  
պայծառ հաւատքով, աներկբայ յոյսով եւ մաքուր սիրով:  
Եւ զարդարէ՛ մեզ՝ խոհեմութեամբ,  
ողջախոհութեամբ, արիութեամբ եւ արդարութեամբ:

Զօրացո՛ւր մեզ,  
որպէսզի յաղթող ըլլանք Բանսարկուին հնարքներուն դէմ,  
կարենանք մարել Չարին բոլոր միսացող նետերդ,  
եւ արդարութեամբ եւ աստուածապաշտութեամբ  
ապրիլ աշխարհի մէջ, ինչպէս որ դո՛ւն կը կամենաս,  
իսկ այս կեանքէն ետք  
անճառելի բարիքներդ կարենանք  
վայելել քեզի՝ տիրոջդ հետ,  
որո՛ւն կը վայելեն փառքն ու գօրութիւնը  
յախտեանս: Ամէն:

Աղօթարար՝  
Խաժակ Արք. Յակոբեան

Առաջնորդ Գանատայի Հայոց